«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Շ-1-1»

ք. Երևան «01» մարտի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Գյումրու տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 11101176 (Տասնմեկ միլիոն մեկ հարյուր մեկ հազար մեկ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ,
ՀՎՀՀ՝ 01506515	Վ. Սարգսյան 14, 21 բն.
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ 1930032323300100	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
	Հ/Հ 16044050085000
Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան	Տնօրեն ..... Ն. Պետրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«01» մարտի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Շ-1-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
1	15612100	Այուր բարձր տեսակի	Բոնդ Կովկաս, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	204	214444.8	1051	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	1051	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
3	15331142	Կաղամբ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	97	535731	5523	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	5523	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
4	15331139	Լոլիկ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	158	218198	1381	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	1381	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
5	15331166	Վարունգ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	139	191959	1381	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	1381	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
15	3222135	Խաղող	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	347	101324	292	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	292	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
20	3222131	Ծիրան	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	317	185128	584	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	584	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
22	3222116	Կիվի	Էկվադոր	Ներկայացվում է ստորև	կգ	847	247324	292	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	292	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
24	3222113	Զամիչ	Sultanaz, Իրան	Ներկայացվում է ստորև	կգ	1142	133614	117	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	117	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
35	15332297	Ջեմ 2	Համլետ Հովսեփյան Ա/Ձ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	820	239440	292	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	292	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
41	15332230	Մուրաբա 5	Բորոդինո, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1637	95600.8	58	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	58	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
42	15332230	Մուրաբա 6	Բորոդինո, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1780	103952	58	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	58	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
43	15332230	Մուրաբա 9	Բորոդինո, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1984	115865.6	58	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	58	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
45	3142100	Մեղր	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	3287	959804	292	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	292	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
54	15235100	Ձկան պահածո յուղով	Ռուսկի Ռիբնի Սիռ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	2249	394024.8	175	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	175	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
57	15512000	Թթվասեր	Ապարան Կաթ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	704	1233408	1752	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	1752	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
58	15541200	Պանիր 2	Նելլի Ղուկասյան Ա/Ձ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1534	2687568	1752	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	1752	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
60	15551600	Մածուն	Ապարան Կաթ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	304	1775360	5840	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	5840	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018

64	15412300	Բուսա-յուղային հալեցված խառնուրդ	Գուրգեն Աղումյան Ա/Ձ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	982	1146976	1168	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	1168	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
67	15861000	Սուրճ	Օրիգինալ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1896	110726.4	58	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	58	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
73	3211300	Բրինձ	Պակիստան	Ներկայացվում է ստորև	կգ	354	351451.2	993	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	993	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
74	15617000	Ցորենաձավար	Գևորգ Մանասերյան, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	203	59276	292	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1	292	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
Ընդամենը							**11101176**				

** Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

Հացամթերք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
1	15612100	Այուր բարձր տեսակի	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %:
Բանջարեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
3	15331142	Կաղամբ	Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: 55% -վաղահաս, 45%- միջահաս: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած:Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի:Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 1 կգ-ից:
5	15331166	Վարունգ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 8-15 սմ, նեղ մասի տրամագիծը՝ 4-6 սմ, թարմ, ամբողջական, առողջ, չկեղտոտված, առանց մեխանիկական վնասվածքների:
Մրգեր			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
15	3222135	Խաղող	Խաղող թարմ, ողկույզները ամբողջական, կորիզով: Պտուղները մաքուր, չվնասված, առողջ:
20	3222131	Ծիրան	Ծիրան թարմ, ծիրանին հատուկ ձևով և գույնով, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների:
22	3222116	Կիվի	Կիվի հասած, մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 4.5 սմ-ից ոչ պակաս:
24	3222113	Չամիչ	Չամիչ առանց կորիզի: Չափածրարված, պահված 5-ից մինչև 20 C ջերմաստիճանում, 70 %-ից ոչ ավելի խոնավության պայմաններում:
Քաղցրավենիք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի			
35	15332297	Ջեմ 2	Պատրաստված դեղձից: Տրորված կամ կտրատված պտուղների թանձր զանգված: Քաղցր կամ թեթև թթվահամությամբ քաղցր հաճելի բնորոշ են պտուղներին, համապատասխան մրգի գույնին, որակյալ, մանրէազերծված: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 % :

41	15332230	Մուրաբա 5	Պատրաստված բալից: Մինչև 1 լիտրանոց ապակյա տարաներով, պտուղների զանգվածային մասը՝ առնվազն 70 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 60 % և ոչ պակաս 1 տարի:
42	15332230	Մուրաբա 6	Պատրաստված կեռասից: Մինչև 1 լիտրանոց ապակյա տարաներով, պտուղների զանգվածային մասը՝ առնվազն 70 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 60 % և ոչ պակաս 1 տարի:
43	15332230	Մուրաբա 9	Պատրաստված թզից: Մինչև 1 լիտրանոց ապակյա տարաներով, պտուղների զանգվածային մասը՝ առնվազն 60 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80 % և ոչ պակաս 1 տարի:
45	3142100	Մեղր	Բնական մեղր՝ ծաղկային կամ մեղրացողային, առանց մեխանիկական խառնուրդների և խմորման, ջրի զանգվածային բաժինը՝ 18,5 %-ից ոչ ավելի, սախարոզի զանգվածային մասը (ըստ բացարձակ չոր նյութի)՝ 5,5%-ից ոչ ավելի, իսկ Դիաստազային /Գոտեյի միավոր/ թիվը՝ ոչ պակաս 7%-ից: Պիտանելիության ժամկետը՝ առնվազն 10 տարի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ առնվազն 60 %:
Պահածոներ			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
55	15331168	Խավիար սմբուկի	Խավիար սմբուկի, ապակե տարաներով, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %:
Կաթնամթերք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
57	15512000	Թթվասեր	Բաղադրությունը՝ կովի թարմ կաթ, չոր յուղազերծ կաթ, սերուցքային կարագ, բակտերիալ մերան: Յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, Փաթեթավորված սպառողական 200-500 գ տարաներով: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Բժշկաանասնաբուժական և լաբորատոր փաստաթղթերի առկայությունը պարտադիր է: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%:
58	15541200	Պանիր 2	Սպիտակ աղաջրային պանիր, կովի կաթից, 36- 40% յուղայնությամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Բժշկաանասնաբուժական և լաբորատոր փաստաթղթերի առկայությունը պարտադիր է:
60	15551600	Մածուն	Կովի թարմ կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000T: Փաթեթավորված մինչև 5 կգ-ոց տարաներով: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Բժշկաանասնաբուժական և լաբորատոր փաստաթղթերի առկայությունը պարտադիր է: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%:
Յուղեր			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 883 որոշմամբ ընդունված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
64	15412300	Բուսա-յուղային հալեցված խառնուրդ	Բուսա-յուղային հալեցված խառնուրդ, բաղադրությունը՝ բուսական յուղեր և ճարպեր, արոմատիզատոր, ներկանյութ B-կարոտին: Փաթեթավորված պլաստմասե կամ մետաղական տառաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %
Համեմունքներ			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
67	15861000	Սուրճ	Բնական լուծվող սուրճ, չորացրած փոշու վիճակում, բնական բրված սուրճի խտածո, նախատեսված տաք և սառը ըմպելիք պատրաստելու համար, խոնավության զանգվածային մասը՝ թողարկման ժամանակ՝ 4,0 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 6,0 %-ից ոչ ավելի, կոֆեինի զանգվածային մասը՝ 2,3 % -ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 4,7 pH-ից ոչ պակաս:

Ընդեղեն, Ձավարեղեն, Մակարոնեղեն			
Ձավարեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
73	3211300	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%
74	15617000	Ցորենաձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր տեսակի ցորենից: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՒ

«Ֆոտոն» ՍՊԸ

Տնօրեն ..... Ն. Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«01» մարտի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2-Շ-1-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	15612100	Այուր բարձր տեսակի			21444.48	42888.96	64333.44	85777.92	107222.4	128666.88	150111.36	171555.84	193000.32	214444.8	214444.8
3	15331142	Կաղամբ			53573.1	107146.2	160719.3	214292.4	267865.5	321438.6	375011.7	428584.8	482157.9	535731	535731
4	15331139	Լոլիկ			21819.8	43639.6	65459.4	87279.2	109099	130918.8	152738.6	174558.4	196378.2	218198	218198
5	15331166	Վարունգ			19195.9	38391.8	57587.7	76783.6	95979.5	115175.4	134371.3	153567.2	172763.1	191959	191959
15	3222135	Խաղող			10132.4	20264.8	30397.2	40529.6	50662	60794.4	70926.8	81059.2	91191.6	101324	101324
20	3222131	Ծիրան			18512.8	37025.6	55538.4	74051.2	92564	111076.8	129589.6	148102.4	166615.2	185128	185128
22	3222116	Կիվի			24732.4	49464.8	74197.2	98929.6	123662	148394.4	173126.8	197859.2	222591.6	247324	247324
24	3222113	Չամիչ			13361.4	26722.8	40084.2	53445.6	66807	80168.4	93529.8	106891.2	120252.6	133614	133614
35	15332297	Ջեմ 2			23944	47888	71832	95776	119720	143664	167608	191552	215496	239440	239440
41	15332230	Մուրաբա 5			9560.08	19120.16	28680.24	38240.32	47800.4	57360.48	66920.56	76480.64	86040.72	95600.8	95600.8
42	15332230	Մուրաբա 6			10395.2	20790.4	31185.6	41580.8	51976	62371.2	72766.4	83161.6	93556.8	103952	103952
43	15332230	Մուրաբա 9			11586.56	23173.12	34759.68	46346.24	57932.8	69519.36	81105.92	92692.48	104279.04	115865.6	115865.6
45	3142100	Մեղր			95980.4	191960.8	287941.2	383921.6	479902	575882.4	671862.8	767843.2	863823.6	959804	959804
54	15235100	Ձկան պահածո յուղով			39402.48	78804.96	118207.44	157609.92	197012.4	236414.88	275817.36	315219.84	354622.32	394024.8	394024.8
57	15512000	Թթվասեր			123340.8	246681.6	370022.4	493363.2	616704	740044.8	863385.6	986726.4	1110067.2	1233408	1233408
58	15541200	Պանիր 2			268756.8	537513.6	806270.4	1075027.2	1343784	1612540.8	1881297.6	2150054.4	2418811.2	2687568	2687568
60	15551600	Մածուն			177536	355072	532608	710144	887680	1065216	1242752	1420288	1597824	1775360	1775360
64	15412300	Բուսա-յուղային հալեցված խառնուրդ			114697.6	229395.2	344092.8	458790.4	573488	688185.6	802883.2	917580.8	1032278.4	1146976	1146976
67	15861000	Սուրճ			11072.64	22145.28	33217.92	44290.56	55363.2	66435.84	77508.48	88581.12	99653.76	110726.4	110726.4
73	3211300	Բրինձ			35145.12	70290.24	105435.36	140580.48	175725.6	210870.72	246015.84	281160.96	316306.08	351451.2	351451.2
74	15617000	Ցորենաձավար			5927.6	11855.2	17782.8	23710.4	29638	35565.6	41493.2	47420.8	53348.4	59276	59276
Ընդամենը					**1110117.56**	**2220235.1**	**3330352.7**	**4440470**	**5550587.8**	**6660705.4**	**7770823**	**8880940.5**	**9991058**	**11101176**	**11101176**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար.....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆոտոն» ՍՊԸ

Տնօրեն ..... Ն. Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ